

30 JUL 2010

28

№ 2. Հրատարակւոքիւն «ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» № 2.

Ս. ԲԱՇԽՆՋԱՂԻԱՆ.

ԽԱՂՈՂԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՒ

ՆՐԱՆՑ ԲԺՇԿԵԼԸ

(Երեք նկարներով)

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԷՊՕԽԱ» Գաղութակ. № 3.

1910

634.8

F-28



Մ. Ե. ՓՐԻՊՈՆՈՎԻ



(Թիֆլիսում) ԾԱՆՈՒՈՒՄ ԵՆ՝

Բոլորի րմիտրեան դերեր՝ 1) Մաքուր պղնձի աղջապ, 2) Ծմբափոշի, 3) Պարփեան կանաչ, 4) Ախառնան փոշի «Էկէր», 5) Ծխախոտի երտորակաւ:

Ծառերի բծիկութեան գործիքներ՝ 1) Վերմորիսի և այլ գործարանների սրակիշներ, 2) Փաշուր, 3) Տօրպիշներ, 4) Այնտիկների փայտաներ—Մեղուգա:

Մերներ՝ 1) Աւուրտի (Կոնջի) ֆրանսիական ամենալայնուր տիտակի, 2) Երեքնուկի կարմիր:


Պարապարներ՝ 1) Զիլիի բորակ, 2) Սապերֆուրատ, 3) Թոմաս-շուկ:

Գինեգործութեան, այգեգործութեան և գիւղամանուպան ամեն տեսակ գործիքներ և մեքենաներ:

Պողատու ծառեր՝ պտուղատու ամենալայնուր տեսակների:

Հապն նամակների և հեռագրների համար—

Տիֆլիս, Մ. Ե. ՓՐԻՊՈՆՈՎ.



«Միջին-Մայրաք»/ Քիմիկատ-Մաք

630
13-ԲԱ



634.8

Բ-28

պ.

ԽԱՂՈՂԻ ՀԻՒՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ

ԲԺՇԿԵԼԸ

Տաս տարուց իվեր մեր խաղողի այգիները զանազան անկային հիւանդութիւններից անազին զնաններ են կրում: Այդ հիւանդութիւններից ամենատարածւածը և վտանգաւորը մեր այգեգործութեան համար համարւում են անկասկած միլիոն (չոռ) և օիլիոն (թոզ) հիւանդութիւնները:

Թէ չոռը և թէ թոզը տարածւում են շատ մանր, հասարակ աչքով աննկատելի բեղմնիկների (սերմիկների) միջոցաւ, որոնց քանակութիւնը անհաշւելի է. այգալիսի բեղմնիկները, ընկնելով պտղի, տերեւի և վազի նուրբ մասերի վրայ և այն՝ ամառուայ խոնաւ եղանակներին, մեծ արագութեամբ սկսում է զարգանալ, բազմանալ և այգալիսով վարակւում և անպէտքացնում է, թէ ապագայ բերքը և թէ փչացնում է վաղը:

Այժմ նկարագրենք այդ հիւանդութիւնները և ցոյց տանք, թէ ինչ միջոցներով կարելի է զրանցից ազատել:

1) Միլիոն (չոռ—МИЛЬДЬЮ):

Միլիոն հիւանդութիւնը կարելի է ճանաչել մօտաւորապէս հետեւեալ նշաններից: Խաղողի վազի տերեւների երեսի կողմի վրայ սկզբում նշմարւում են

56501
1003

բաց դեղին գոյն ունեցող անորոշ ձևի բծեր, որոնք տերևի հակառակ կողմից ծածկւած են լինում ավելի նման սպիտակ փոշիով: Այդ բծերը ժամանակի ընթացքում չորանում—գարչնի գոյն են ստանում և տերևը սկսում է կուչ գալ և ապա՝ թափւել: Պաղողի մատաղ ճիթը նոյնպէս ավերանման փոշիով է պատւում և թեթև շարժումից թափւում:

Իսկ եթէ հիւանդութիւնը երկաց աւելի ուշ, այսինքն, երբոր պտուղը արդէն խոշորացել է, այդ դէպքում խաղողի հատիկները (գիլէքը) կորցնում են իրենց բնական կանաչ գոյնը, կուչ են գալիս ու փտում են:

Հիւանդութիւնը սաստկանում է մանաւանդ անձրևային խոնավ եղանակներից յետոյ և մի քանի օրւայ միջոցում վարակում են ամբողջ այգին: Պաղողի բերքը նւազում է, երբեմն բոլորովին ոչնչանում:

Եթէ ամառը չորային է, ընդհակառակը, միւլդիւրի բեղմնիկները չեն զարգանում և իր սաղմի մէջ ոչնչանում են, որով և այգին փրկւում:

Այգին այդ հիւանդութիւնից պահպանելու համար անպայման հարկաւոր է վազերը բժշկել: Այսինքն, մայիս ամսւայ սկզբներում, երբոր տերևները դեռ նոր են բացւել, վազերը սրսկել (շաղ տալ) ըօրդոյեան հեղուկով (бордосская жидкость):

Բորդոյեան հեղուկը պատրաստւում է այսպէս: Փայտի կամ կաւի ամանի մէջ լցնում են կէս վեդրօ տաքացրած ջուր և այդ ջրում հալցնում են 4-ից մինչև 5 ֆունտ պղնձի արջասպ (медный купорос): Արջասպը աւելի լաւ է առաջուց թակել, որովհետև մանրացրածը ջրի մէջ աւելի շուտ է լուծւում: Մի ուրիշ ամանով վերցնում են $2\frac{1}{2}$ —3 ֆունտ նոր այրած կիր և, աւելացնելով սառը ջուր, հանգցնում (ստացւում է հանգած կիր), յետոյ հանգած կրի վրայ

լցնում են կէս վեդրօ ջուր և լաւ խառնում, այնքան որ դառնում է կաթի նման ջրալի հեղուկ:

Մի երրորդ մեծ ամանով (ամենայարմարն է կիսատակառը—полубочка) վերցնում են իննը վեդրօ մաքուր ջուր և նրա մէջ ածում արդէն լուծւած պղնձի արջասպը և փայտով լաւ խառնում: Յետոյ աստիճանաբար աւելացնում են ջրի մէջ լուծւած հանգցրած կիրը և այնքան խառնում են մինչև որ ստացւում է բաց կապտագոյն հեղուկ, որ և կոչւում է «ըրդոյեան»:

Կրաջուրը անհրաժեշտ է մաղի միջով ածել, որպէսզի չհալած մասերը չխանգարեն դեղի մաքրութեանը: Բացի դրանից կիրը ածում են արջասպից յետոյ, որովհետև հակառակ դէպքում դեղը փոխւում է իւր յատկութիւնը:


Իմանալու համար թէ արդեօք դեղը ճիշտ չափով է պատրաստւած, թէ ոչ, անում են հետևեալ փորձը. կացնի կամ դանակի ծայրը թրջում են հեղուկով, եթէ մետաղը մնաց անփոփոխ, ուրեմն դեղը լաւ է պատրաստւած. բայց եթէ ծայրը կարմրի, հարկաւոր է կիրը աւելացնել, թէ չէ սրսկելու ժամանակ տերևները և պտուղը կարող են փխսւել, ինչպէս ասում են այրել:

Այգու բժշկումը կատարւում է առանձին մեքենայով, որ կոչւում է վերմօրէյի սրսկիչ (пульверизаторъ Вермореля) և արժէ 12—13 ռ. իսկ պղնձի արջասպը ծախւում է փութը 4 ռ:

Եթէ այգին փոքր է, գորօրինակ բառորդ գետեաւին, կամ աւելի քիչ, ինչպէս յաճախ պատահում է գիւղերում, և գիւղացուն դժւար է մենակ ձեռք բերել մեքենան, ցանկալի է, որ մի քանի գիւղացիներ կամ հէնց գիւղական համայնքը ինքը գնի մի քանի

մեքենաներ և տայ այգետէրերին հերթով բժշկելու իրանց այգիները:

Թէ ինչպէս է հարկաւոր բանեցնել մեքենան, մանրամասն նկարագրւած է առանձին զրբոյկում, որ տրւում է մեքենայի հետ միասին: Միայն պէտք է



Նկ. 1. Վերմորէլ սրսիչ:

Բժշկութիւնը կատարւում է ամբողջ ամառայ ընթացքում երկու կամ երեք անգամ, նայած եղանակին: Եթէ ամառը անձրևային չէ, բաւական է նրկու անգամ սրսիել—մէկ՝ մայիս ամսւայ կիսում և եկրորդ անգամ յունիսի վերջերում: Իսկ եթէ անձրևներ շուտ շուտ են լինում, այդ դէպքում հարկաւոր է ամենաքիչը նրեք անգամ վազերը սրսիել 1, մայիսի սկզբներում, 2, յունիսի կիսին և 3, յուլիսի սկզբներում:

Եթէ այգին սրսկելուց յետոյ ամիջապէս անձրև եկաւ և լաց տերևները, այդ դէպքում հարկաւոր է սրսկումը նորից կրկնել: Անհրաժեշտ է իմանալ, որ դեղը նախ քան մեքենայի մէջ ածելը պէտք է լաւ

նկատել, որ սրսկելու ժամանակ դեղը փոշիի նման մանր կաթիլներով ծածկի վազի բոլոր կանաչ մասերը: Այդ բանին կարելի է հասնել, եթէ մի քիչ հեռուից շաղ տալ վազերը: Ինչնիցէ, աւելի լաւ է, առաջին անգամ բժշկելիս, ներկայ լինի գործին ծանօթ մարդ՝ ցոյց տալու, թէ արդեօք ինչպէս է հարկաւոր վարել մեքենայի հետ:

խառնել, իսկ մեքենան գործելուց յետոյ—ջրով ողողել և առհասարակ մաքուր պահել:


2) Օրդիում (թոզ—пепелица):

Միլիոնից ոչ պակաս փաստներ է տալիս մեր խաղողի այգիներին օրդիում (թոզ, пепелица) կոչւած հիւանդութիւնը:

Օրդիումով վարակւած վազի տերևները, ճիւղերը և մանաւանդ ճթերը ծածկւում են մոխրագոյն փոշիով, որը ժամանակի ընթացքում չորացնում է տերևները և ճիւղերը, իսկ պտուղը սկսում է ճաքճքւել և կորիզները դուրս գալ: Եթէ վրայի փոշին մատով սրբենք, պտղի վրայ պարզ կ'երևան մանր սև կէտեր. իսկ երբ փոշին մատների տակ տրորում էք, նրանից փթած ձկան հոտ է գալիս:

Հիւանդութիւնը կարող է երևալ ամբողջ ամսւայ ընթացքում, դրա համար էլ հարկաւոր է այգին իր ժամանակին բժշկել, որպէսզի հնար լինի վարակման առաջն առնելու:

Օրդիումը բժշկւում է ծծումքի (ջուրուղղի) փոշիով (сѣрный цвѣтъ) անա թէ ինչպէս:



Նկ. 2. Տօրպիլ—բուքուրդ փչելու մեքենայ:

Խաղողի ծաղկելուց մի քանի շաբաթ առաջ, մոտաւորապէս մայիսի սկզբներում, ծծումքը շաղ են տալիս վազերի վրայ առանձին մեքենաներով, որոնք երկու տեսակի են լինում—1) Նհազլեզի փուքս, կամ

2) Տորպիլ: Երկրորդը առաջինից աւելի նպատակա-
յարմար է, և արժէ մօտաւորապէս 8 ր.:

Պէտք է աշխատել մեքենան այնքան էլ չ'մօտեց-
նել վազերին, որպէսզի ծծումբը փոշիի նման ծածկի
վազի կանաչ մասերը:

Այգու բժշկութիւնը կատարուում է հանդարտ,
պարզ եղանակին, առաւօտեան կամ ճաշից մի քանի
ժամ անց, երբ արեգակը այլ ևս այնքան չի այրում:
Հակառակ դէպքում ծծումբը կարող է վազի նուրբ
մասերին փխսել, ինչպէս ասում են «այրել»:

Գործելու ժամանակ խորհուղ ենք տալիս հասա-
րակ ապակուց շինած կլորածև ակնոցներ բանեցնել,
որովհետև ծծումբի փոշին կարող է աչքի բորբոքում
առաջ բերել:

Երկրորդ անգամ դեղը շաղ են տալիս խաղողի
ծաղկելու ժամանակ, ուրեմն մայիսի վերջում: Իսկ
երրորդ անգամ—յուլիսի սկզբներում:

Պէտք է նկատել, որ այգու բժշկութիւնը հար-
կաւոր է դադարեցնել բերքը հաւաքելուց ամենաքիչը
մի ամիս առաջ, որպէսզի դեղի նշանները բոլորովին
անյայտանան և չ'փխսեն գինու յատկութեանը:

Եթէ ամառը անձրևային չէ, բաւական է երկու
անգամ ծծումբ շաղ տալ:

Ծծումբը, ինչպէս նկատուում է, օգնում է նաև
պտղի արագ հասնելուն և նպաստում է խաղողի քաղ-
ցրութեանը:

Միլդիուն և օիդիումը, ինչպէս ասեցինք, բո-
լորովին փչացնում են մեր խաղողի այգիները և շատ
յաճախ պատահում է, որ բերքի կէսը, երբեմն երեք
բաւորը ոչնչանում է, իսկ մնացած խաղողիցն էլ ստաց-
ւում է թթու, անհամ գինի, որովհետև ճթերը հիւան-
դութեան պատճառով կարգին չեն կարողանում հասնել:

Որովհետև այդ հիւանդութիւնները տարէց տարի
կրկնւելով, կարող են վազը բոլորովին չորացնել, ու-
րեմն միակ ելքը այգիները վտանգից ազատելու հա-
մար—դա բժշկութիւնն է:

Միլդիուն (չոռը) և օիդիումը (թոզը) ամենատա-
րածած հիւանդութիւններն են Կովկասում և մեծ
քանակներ են հասցնում մեր խաղողի այգիներին, բայց
այդ հիւանդութիւնների հետ զուգընթաց, կամ բոլո-
րովին առանձին, վազը ոչ-սակաւ վարակւած է լի-
նում նաև ուրիշ սնկային հիւանդութիւններով, որոնք,
տարէց տարի կրկնւելով, կարող են այգին բոլորովին
փչացնել, եթէ իր ժամանակին դրանց դէմ կուելու
հարկաւոր միջոցներ ձեռք չառնեն:


Դրանք են—անտրակնոզ (антракнозъ, ожогъ,
լատիներէն՝ sphaceloma ampelinum de Bary), կլադոս-
պորիում (антоновъ огонь, լատիներէն՝ Cladosporium
Roesleri), րլէկ-քոտ (սև փտումն, черная гниль,
լատիներէն՝ phoma uvicola B.), վայտ-քոտ (вайтъ
ротъ, бѣлая гниль) և դեմատոֆորա վաստատրիկս
(արմատների փտումն, корневая гниль, լատիներէն՝
dematophora vestatrix):

Անտրակնոզը արտայայտում է հետեւալ կեր-
պով—տերևների, ճիւղերի և ճթերի վրայ երևում են
դարչնագոյն կէտեր՝ սև օղակով շրջապատւած: Դա—
sphaceloma սունկերի բեղմնիկներով (սերմերով) վա-
րակւած տերերն են, որոնք ժամանակով չորանում,
ծակոտւում են, իսկ ճիւղերի և խաղողի ճթի վրայ
նոյն բեղմնիկները վէրջի նման փոսեր են գոյացնում:
Հետևանքը այն է լինւում, որ վազի ճոլոր վարակւած
մասերը սկսում են չորանալ, հեռացալէս խաղողի
բերքը նւազել:

Անտրակնոզը մեզ մօտ այնքան մեծ ծաւալ չի

ընդունում, ինչպէս միլդիոն և օրդիում, բայց այնուամենայնիւ հարկաւոր է այդ հիւանդութեան առաջն առնել և պահպանել մեր այգիները վերջնական անկումից:

Ահա թէ ինչպէս են կուում այդ հիւանդութեան դէմ: Գարնան սկզբներում, վաղը (մատը) կտրելուց մօտաւորապէս տասն օր անցած, երբ որ կոկոնները (աչքերը) դեռ չեն բացւել, հարկաւոր է ամբողջ վաղը թրջել նրկաթի արջասպի (желѣзный купоросъ) և ծծմ'քաթթուի (сѣрная кислота) խառնուրդով: Այդ կատարւում է առանձին վրձիններով:



Նկ. 3 Արջասպ քսելու վրձիններ:

Հեղուկը պատրաստւում է այսպէս. վերցնում են փայտեայ կամ կաւէ ամանը և նրա մէջ ածում մի վեղբո տաքացրած ջուր և այդ ջրի մէջ հալեցնում 15 ֆունտ երկաթէ արջասպը, յետոյ աւելացնում են

մէկ շիշ ծծբաթթու*) և այսպէս ստացւած հալածքը խառնում են 6 վեղբո սառը ջրի հետ և ապա բանեցնում վաղը բժշկելու համար:

Եթէ վաղի կոկոնները բացւել են, այդ հեղուկը բանեցնել այլ ևս չի կարելի և դիմում են այդ դէպքում բժշկութեան ուրիշ միջոցներին:

Այսպէս. ամառուայ սկզբներին, եթէ անտրակնօղի նշոյլներ երևացին, հարկաւոր է վաղերի վրայ շաղ տալ ծծմ'քի փոշին (сѣрный порошокъ), ինչպէս օրդիում բժշկելու ժամանակ:

Անտրակնօղի հետ զուգընթաց պատահում է նաև կլադոսպորիում հիւանդութիւնը (антоновъ огонь, Cladosporium Roasleri):

Վարակւած վաղի տերեւների վրայ գոյանում են մութ-դեղնագոյն կէտեր, որոնք միանալով մէկը միւսի հետ, զոյգ զոյգ ծածկում են համարեա ամբողջ տերեւը: Նոյն տեսակ կէտեր երևում են և ճթերի վրայ: Հետեանքը համարեա նոյնն է, ինչպէս բոլոր սնկային հիւանդութիւնները, այսինքն տերեւը և պտուղը սկսում են չորանալ ու թափւել:

Այս հիւանդութեան դէմ լաւ է օգնում նոյն ծծում'քի փոշին, որ հարկաւոր է ամառուայ ընթացքում 2 կամ 3 անգամ շաղ տալ:

Աւելի զգալի վնասներ է հասցնում խաղողի այգիներին Բլէկ-Րօտ հիւանդութիւնը (черная гниль, սև փտում, phoma uvicola B.), որ մեզ մօտ, Կովկասում, դեռ ևս այնքան տարածւած չէ:

Հիւանդութեան նշանները սրանք են. — տերեւների վրայ գոյանում են սև կէտերով շաղախւած շագանակագոյն անորոշ ձևի բծեր, իսկ ճթերը ծածկւում են

*) Ծծբաթթուն աւելացնել ջրի մէջ քիչ քիչ, զգուշութեամբ:

մութ կապտագոյն փոսիկներով, որոնց մէջ երևում են մանր սև բշտիկներ:

Վնասւած խաղողը սկսում է կուչ գալ, փտել և թափւել: Այդ հիւանդութեան առաջն առնելու համար հարկաւոր է ամառուայ ընթացքում այգին երկու կամ երեք անգամ սրսկել ռորդոյնան հեղուկով (бордоская жидкость), ինչպէս միլիոն բժշկելու ժամանակ:

Սակաւ է պատահում Վայդ-Րօտ անւանուած հիւանդութիւնը (вайтъ ротъ, бѣлая гниль), որ այտապայտում է հետեւեալ կերպով.—ամբողջ ճիւղը մի անգամից սկսում է մութ-նարնջի գոյն ընդունել և չորանալ, իսկ խաղողի հատիկների վրայ նշմարւում են բլրաձև մոխրագոյն մանր բշտիկներ:

Այս հիւանդութիւնը բժշկւում է ինչպէս Բլէկ-Րօտը:

Եթէ խաղողի այգին խոնաւ տեղ է գտնւում, յաճախ կարելի է նկատել այսպէս անւանւած, Դեմա-տոֆորա վաստրատրիկա (корневая гниль, бѣлая гниль, լատիներէն՝ dematophora vastratrix):

Հիւանդութիւնը սկսում է դրանով, որ վարակւած վագերի տերեւերը տարէցտարի, աստիճանաբար մանրանում են, դեղնում և ապա բոլորովին չորանում: Խաղողի ճիւղերը, ի հարկ է, բնական մեծութեան չեն հաւնում և վաղաժամ թառամում: Հիւանդութեան երեւուլու վրայ երրորդ տարին, վաղը բոլորովին չորանում է, որովհետեւ այդ ժամանակամիջոցում արմատները արդէն փթած են լինում:

Եթէ այգալիսի վաղը հողից հանւի, որ շատ հեշտութեամբ է կատարւում, արմատների վրայ պարզ կ'երևան սպիտակ բորբոսնած տեղեր. դա զեմատոֆորա մակարոյժ սունկի բարակ թելերն ու բեղմնա-

որ պտուղներն են (мицелий), որոնք անդադար ծծում են արմատներից հիւթը: Այս բորբոսը տարածւում է հողի միջով վազից վազը և վարակում ամբողջ այգին:

Այդ հիւանդութիւնը արմատախիլ անելու համար հարկաւոր է վարակւած և նոյնպէս մօտակայ վագերը այրել, իսկ հողը մի քանի տարի ազատ պահել որևէ բան ցանելուց կամ տնկելուց:

Բացի դրանից, շատ յաճախ է պատահում վագի տերեւների վաղաժամ դեղնելը (желтуха) կամ կարմրելը (краснуха): Այս երկու հիւանդութիւններից առաջինը աւելի մեծ նշանակութիւն ունի և կախւած է մեծ մասամբ հողի յատկութիւնից, այն է՝ կամ երկաթէ աղերի պակասութիւնն է պատճառը, կամ՝ հողի մէջ եղած չափազանց խոնաւութիւնը:

Հարկաւոր է ուրեմն այդ հիւանդութիւնից ազատելու համար կամ հողը երկաթէ աղերով պարարտացնել, կամ վաղը խոնաւութիւնից ազատ պահել:

Տերեւի կարմրելը առաջ է գալիս սեպտասպորիում (septasporium) մակարոյժ սունկի վարակումից, բայց այդ հիւանդութիւնը ոչ մի զգալի վնաս այգուն չի տալիս, այդ պատճառով բժշկելը աւելորդ է համարւում:

Մնկային հիւանդութիւններից ոչ-պակաս վնասներ հասցնում են խաղողի այգուն նաև զանազան տեսակ միջատներ, որոնցից մեզ մօտ, Անդրկովկասում, շատ յաճախ պատահում են հետեւեալները: 1) Փիտօպտուս վիտիս—տերեւների բշտիկիչը виноградный зудень, լատիներէն՝ Phytoptus vitis), 2) Դակտիլոպիուս վիտիս—մեղրահիւթ արտադրող ոչիւր (виноградный червец, լատիներէն՝ Dactylopius vitis), 3) Կօնիսիլիս ամ րիգուսիլա—վագի տերեւ ոլորող թր-

թուռը (виноградная листовертка, լատիններէն՝ Conchylis ambiguella), 4) Տորտրիկա պիլերիանա — սարգոստային մանող թրթուրը (լատիններէն՝ Tortix pil-leriana), 5) Ինո ամպելոֆագա — կոկոն (աչքունք) կրծող որդն (լատիններէն՝ Ino ampelophaga), 6) Փիլօկսերա — արմատի ոշիւը (լատ. Phylloxera vastatrix:

Գոյութիւն ունեն մեզ մօտ և՛ ուրիշ շատ տեսակ միջատներ, մեծ մասամբ կոշտ թևաւորներ, որոնք բացի վազից միևնոյն ժամանակ վնասում են և՛ պտղա-տու ծառերին և՛ բանջարեղէնին, այդ պատճառով այստեղ դրանց մասին չենք խօսի:

Քիտոպտուս վիտիս — վազի տերևի վրայ բըշտիկ-ներ առաջ բերող միջատը — շատ մանր, հասարակ աչքով աննկատելի մի կենդանի է: Ծծելով տերևնե-րից հիւթը, ուռուցքներ է գոյացնում նրանց վրայ:

Տերևի հակառակ կողմից (տակի կողմից) փոսեր են գոյանում, որոնք կարծես սպիտակ կամ դեղին գոյնի մախմուրով ծածկւած լինեն. դրանք միջատի բուռներ են և առաջ են եկած, ինչպէս ասացինք, տե-րևից հիւթը ծծելուց:

Այդ միջատը այնքան մեծ վնաս չի տալիս վա-զին, որովհետև խաղողի ճիւղերը դրանով վարակւած չեն լինում:

Ռչնացում է հեշտութեամբ ծծումքի փոշիով ինչպէս օդիւրում (թողը) հիւանդութիւնը:

Դակտիօպիոս վիտիս — ընդհակառակը, վնասում է խաղողի ճիւղերին, որոնք ամբողջապէս ծածկւում են մեղրի նման թանձր կոյտով. դա այդ փոքրիկ մի-ջատի արտաթորութիւններն են. իսկ տերևները մեծ մասամբ պատած են լինում սարգոստայնով: Վնաս-ւած ճիւղերը սկսում են սևանալ և փայլել, իսկ տերե-ւները մասամբ չորանում, թափւում են:

Ինքը միջատը մանր ոշիւի է նմանում և իւր ձևերը դարսում է վազի ճեղքերի մէջ:

Դրանց ոչնչացնելու համար հարկաւոր է նախ և առաջ գարնան սկզբներում վազի կօթը քսել (թրջել) այսպէս անւանւած «լիզօլ» հեղուկով կամ թէ նալթի և ձէթի խառնուրդով, որոնք վերցնում են երկուսն էլ հաւասար քանակութեամբ: Եթէ հիւանդութիւնը, այնուամենայնիւ ամառայ ընթացքում երևաց, հար-կաւոր է վազերը սրսկել նալթի էմուլսիայով (коро-синовая эмульсия):

Էմուլսիան պատրաստւում է հետևեալ կերպով. վերցնում են բառորդ ֆունտ հասարակ սապոն, մանր կտրտում և հալեցնում բառորդ վեդրօ տաքա-ցրած ջրի մէջ, յետոյ դրան աւելացնում են 10 ֆունտ նալթ և մետաղիայ ձողերից շինած աւելով սկսում են լաւ խառնել: Դա շարունակւում է մօտ 10—15 րոպէ. բայց որպէս զի խառնուրդը չըստոյն, միևնոյն ժամանակ ամանը պահում են մարեղ կրակի վրայ: Վերջապէս ստացւում է թանձր թանի նման մի հեղուկ: Այսպէս պատրաստւած դեղը խառնում են 8 վեդրօ մաքուր ջրի հետ և ապա սկսում սրսկել այգին:

Կօնխիլիս ամքիգուէլլա — դա մի թրթուռ է, որ ամառայ սկզբներում թափւում է նոր գոյացող պտղի վրայ (ծաղկի բողբոջի վրայ) և փչացնում: Պատա-հում է, որ թրթուռը աւելի ուշ է երևան գալիս. օր-յուլիսի վերջերում կամ օգոստոսի սկզբներում. այդ դէպքում նա ներս է խուժում չհասած խաղողի հա-տիկների մէջ և սկսում ծծել պտղի հիւթը: Միևնոյն ժամանակ ամբողջ ճիւղը ծածկւում է թրթուռի արտադրած սարգոստայնանման թելերով: Հետևանքը այն է լինում, որ խաղողը փտում է և թափւում:

Ինքը թրթուռը (որդն) թուխ կարմիր դոյն ունի
և հասնում է մօտ քառորդ վերջով մեծութեան:

Այս միջատի դէմ կռւելու միակ միջոցն է սրսկել
վազերը, հիւանդութեան երևալուն պէս, Պարիզեան
կանանչով*) (парижская зелень).

Դեղը պատրաստում է հետեւեալ կերպով. վեր-
ցնում են 10 վեդրօ մաքուր ջուր և մէջը ածում են
կէս ֆունտ պարիզեան կանանչը և խառնում: Յետոյ
աւնլացնում են դրան նոր հանգցրած կրից պատրաս-
տած կրաջուրը. (վերցնում են մէկ ֆունտ նոր այ-
րած կիրը և հանգցնում քառորդ վեդրօ ջրի մէջ) և
նորից լաւ խառնում: Կրաջուրը հարկաւոր է մազի
միջով անցկացնել, ինչպէս ըորդոյնան հեղուկը պատ-
րաստելիս:

Սրսկում են (շաղ են տալիս) վազերը Վերմօ-
րելի կամ Պլատցի մեքենաներով, ինչպէս միլիդիու-
բժշկելիս: Թրթուռը, ուտելով թունաւորւած պտուղը,
անմիջապէս սատկում է: Պարիզեան կանաչի հետ
պէտք է շատ զգոյշ լինել, որ փոշին կամ պատրաս-
տած դեղի կաթիլները մարդի աչքին չդիպչեն, որով
հետև իբրև թոյն՝ բոլորովին էառաջ բերում:

Միևնոյն ժամանակ տերեւը կամ պտուղը սրսկե-
լուց յետոյ երկու շաբաթ չէ կարելի կերակրի մէջ
գործածել, մինչև որ թոյնի գորութիւնը անցնի:

Տօրտրիկս պիւլերիանս թրթուռը վազի տերեւները
դեռ նոր բացւելու ժամանակամիջոցին խիտ կերպով
ըջապատում է նրանց սարգոստայնով և չորացնում:

Ինքը թրթուռը հասնում է մօտ կէս վերջով մե-
ծութեան, իսկ գոյնը դեղին-կանաչին է տալիս: Մար-
մնի վրայ պարզ երևում են մուգ գոյնի 3 զուգըն-
թաց գծեր:

*) Պարիզեան կանաչը թունաւոր մի փոշի է, որ պա-
րունակում է իւր մէջ 58 տոկոս մկնդեղ:

Ոչնչացնելու միջոցը նոյնն է, ինչպէս կօնխիլիս
ամբիգուելլայի:

Ինօ ամպելլօֆագան մոխրագոյն, սև պլիկով շատ
մանր թրթուռ է: Դրա հասցրած վնասը կայանում է
նրանում, որ ներս է խուժում վազի դեռ չբացւած
կոկոնների (աչքունքի) մէջ և ուտելով փչացնում:

Ինօ ամպելլօֆագան ոչնչացնելու համար դիմում
են հետեւեալ միջոցին. պատրաստում են ձէթից և
ասֆալտից (գետնածիւթ) մի խառնուրդ, վերցնելով
երկուսն էլ հաւասար քանակութեամբ և դրանով քսում
վազի բունը (կոթը): Թրթուռը այլ ևս չէ կարող բար-
ձրանալ մինչև կոկոնները, կպչում է դեղին և վրէն
սատկում:

Փ ի լ օ կ ս ն ր ա:

Բացի այդ բոլոր միջատներից ամենավնասակարը
խաղողի այգիների համար պէտք է հաշւել Փիլօկսերան:

Դա շատ մանր, հասարակ աչքով աննկատելի ո-
ջիւնման, բաց-դեղին գոյնի մի միջատ է, որ նստած
է լինում վազի ամենաքնքոյշ արմատների վրայ և ծը-
ծում է նրանց հիւթը: Դրա հետեանքը այն է լինում,
որ վազը, արմատներից բաւականաչափ սնունդ չըս-
տանալով, սկսում է տարէց տարի նւազել, այսինքն
պտուղ չհասած թափւում է, տերեւները մանրանում
են և վաղաժամ թառամում և, չորս, հինգ տարուց
յետոյ, վազը բոլորովին չորանում է:

Փիլօկսերայով վարակւած վաղի արմատները
ծածկւած են լինում հազարաւոր միջատներով, որոնք
իրանց ծծելովը արմատների վրայ ուռուցքներ են
առաջացնում: Վարակւած արմատը չորանում է և
վազը իւր գոյութիւնը վերջացնում:

Ֆիլոսոֆիան մեծ մասամբ հողի միջոցն է տա-
րածում, անցնելով վազից վազ ամեն ուղղութեամբ
և այդպիսով վարակում է ամբողջ աշխին*)

Այդ միջառի հետ կուել կարելի է միայն պատ-
ւաստելով տեղային խաղողի տեսակները ամերիկա-
կան վազի վրայ:

Տեղային վազի ոստը (մատը) պատւաստում են
ամերիկական ոստի հետ և տնկում այնպէս, որ ար-
մատները ամերիկական վազի ստացւի, սա ֆիլոսոֆ-
րայից չի վնասում, իսկ խաղողը տեղային է ըստաց-
ւում Սա, այսպէս ասած, նախազգուշական միջոց է.
իսկ եթէ այդին արդէն վարակւած է ֆիլոսոֆայով,
հարկաւոր է վարակւած տեղերը սրսկել (առանձին
գրա համար յատուկ մեքենայով) ծծմքաւածխածինով
(сѣрноуглеродъ):

Թէ առաջին և թէ երկրորդ կուելու միջոցները
առանձին պատրաստութիւն են պահանջում, այդ
պատճառով հիւանդութեան դէպքում հարկաւոր է
կառավարութեան օգնութեանը դիմել, որը ձրիաբար
բոլոր միջոցները ձեռք է առնում ֆիլոսոֆիան ոչնչա-
ցնելու համար:



*) Ստացւում են այսպէս անանաւած ֆիլոսոֆային
օղակներ (Филок. чаша):

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Խաղողի հիւանդութիւնը եւ նրանց բժշկելը:

Միլիոն	1 էր.
Օրդիում	5 »
Վազին վնասատու սնկային հիւանդութիւնները	7 »
Վազին վնասատու միջատներ	11 »
Ֆիլոսոֆիա	15 »



« Ազգային գրադարան



NL0288832

„ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ“



1) «Պտղատու ծառերի թշնամիները եւ նրանց դէմ կուելու միջոցներ», հարուստ պատկերադարձւած:

Ձեռնարկ պարտիզպանների և պտղաբույծների համար: Գինն է՝ կազմած 45 կոպ. անկազմ 35 կոպ.:

2) Ա. Աթանասեան՝ «Հողի պարարտացումը», պատկերներով: Գինն է 15 կոպ.:

3) «Ուղեցոյց գիւղացի կօօպերատորին»: Գինն է 25 կ.

4) Բէօմէօր Կ. «Ձեռնարկ գիւղատնտեսական թռչնապահութեան» բազմաթիւ նկարներով: Գինն է 25 կոպ.

5) Ա. Աթանասեան «Բամբակը եւ նրա մշակութիւնը» պատկերադարձ ձեռնարկ բամբակագործների համար: Գինն է 25 կոպ.

6) Բաղանթար Ա.՝ «Գործնական ձեռնարկ կաթնատնտեսութեան», Բազմաթիւ նկարներով:

7) Ս. Բաշինջաղեան. Խաղողի հիւանդութիւնները եւ նրանց բժշկելը. 3 պատկերներով: Գինն է 5 կոպ.:



Գրեւել «ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» խմբագրութեան՝ Тифлис редакцію „Гюхатнесь“.